Հավելված № 2
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«26» 12 2024 թ.
№ 170 հրամանի

# ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունն (այսուհետ նաև՝ Ընկերություն) իր ստորաբաժանումների, մասնաճյուղերի ու հիմնարկների գործունեությամբ Հայաստանի Հանրապետության տնտեսության համար ունի ռազմավարական նշանակություն: «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն Հայաստանի Հանրապետությունում էներգետիկ ոլորտի առաջատար ընկերություններից է:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն, լինելով աշխարհի խոշորագույն գազային և էներգետիկ ընկերություններից մեկի՝ «Գազպրոմ» ՀԲԸ-ի դուստր ընկերություն, իր գործունեության շրջանակներում ապահովում է բնական գազի հուսալի, անխափան և անվտանգ մատակարարումը:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի ղեկավարությունն աշխատողների կյանքի ու առողջության պահպանումը համարում է առաջնային, աշխատանքի անվտանգության, առողջության պահպանման և հրդեհային ու ճանապարհային երթևեկության անվտանգության (այսուհետ ԱԱ, ԱՊ, և Հ ու ՃԵԱ) կառավարման համակարգը դիտարկում է Ընկերության արդյունավետ կառավարման անհրաժեշտ տարր ու կառավարման բոլոր գործառույթներն օգտագործում է որպես աշխատողների կյանքի, առողջության և գույքի պահպանման համար ազդող գործոններ: ԱԱ, ԱՊ, և Հ ու ՃԵԱ քաղաքականությունը (այսուհետ՝ Քաղաքականություն) փաստաթուղթ է, որը սահմանում է Ընկերության պաշտոնական դիրքորոշումն իր նպատակների ու պարտավորությունների նկատմամբ:

**Քաղաքականության առաջնահերթ նպատակներն են.**

- անվտանգ աշխատանքային պայմանների ստեղծումը, աշխատողների կյանքի և առողջության պահպանումը,
- վտանգավոր արտադրական օբյեկտներում պատահարների ռիսկերի նվազեցումը,
- արտադրական գործունեության հետ կապված ճանապարհատրանսպորտային պատահարների ռիսկերի նվազեցումը,
- հրդեհների առաջացման ռիսկերի նվազեցումը,
- ԱԱ, ԱՊ, և Հ ու ՃԵԱ համակարգերի համապատասխանությունը ISO 45001 միջազգային ստանդարտի պահանջների ապահովմանը, սերտիֆիկացումը և աշխատանքային վիճակում պահպանումը:

Արդյունքների հասնում են պատահարների, մասնագիտական հիվանդությունների, հրդեհների, ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելմամբ՝ հիմնվելով.

- վտանգների նույնականացման,
- ԱԱ, ԱՊ, և Հ ու ՃԵԱ ռիսկերի գնահատման և կառավարման,
- աշխատողների և նրանց ներկայացուցիչների իրազեկման բարձրացման նրանց ԱԱ, ԱՊ, և Հ ու ՃԵԱ կառավարման համակարգում ներգրավելու գործոնների վրա:

**ԱԱ, ԱՊ, և Հ ու ՃԵԱ ոլորտում Ընկերության պարտավորություններն են.**

- անընդհատ նվազեցնել արտադրական վնասվածքների, մասնագիտական հիվանդությունների ցուցանիշները, ինչպես նաև արտադրական գործունեության հետ կապված նվազագույնի հասցնել հրդեհների, ճանապարհատրանսպորտային պատահարների առաջացման պատճառները,
- ապահովել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կազմակերպության ստանդարտների համապատասխանությունը ԱԱ, ԱՊ, և Հ ու ՃԵԱ ոլորտներում նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի, իրավական ակտերի պահանջներին,
- ապահովել ԱԱ, ԱՊ, և Հ ու ՃԵԱ կառավարման համակարգի արդյունավետ գործունեությունն ու շարունակական կատարելագործումը զուգահեռ զարգացնելով ԱԱ, ԱՊ, և Հ ու ՃԵԱ մշակույթ,
- իրականացնել ԱԱ, ԱՊ, և Հ ու ՃԵԱ ոլորտներում վտանգների գնահատում, վնասվածքների, աշխատողների առողջության վատթարացման և գույքի վնասումը կանխելու համար վտանգների կանխարգելման ապահովում,
- ապահովել գիտական և մեթոդական արդի զարգացումների ներդրումը ԱԱ, ԱՊ, և Հ ու ՃԵԱ ոլորտներում,
- աշխատողներին ակտիվորեն ներգրավել ԱԱ, ԱՊ, և Հ ու ՃԵԱ պահանջների ապահովման, առողջ և անվտանգ աշխատանքային պայմաններ ապահովող գործողություններին ուղղված գործունեության մեջ,
- անընդհատ բարձրացնել ԱԱ, ԱՊ, և Հ ու ՃԵԱ ոլորտներում աշխատողների գիտելիքների և զբաղեցրած պաշտոնին համապատասխանության մակարդակը,
- Ընկերության ստորաբաժանումների, մասնաճյուղերի ու հիմնարկների շահերից ելնելով մատակարար և կապալառու կազմակերպություններից պահանջել ԱԱ, ԱՊ և Հ ու ՃԵ անվտանգության ոլորտներում գործել հանրապետական, տեղական ինքնակառավարման մարմինների և Ընկերության գործունեությունը կարգավորող նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի, իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Ընկերության ղեկավարությունը ստանձնում է ԱԱ, ԱՊ, և Հ ու ՃԵԱ կառավարման համակարգի քաղաքականության և նպատակների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների տրամադրման պարտավորություն և ելնելով իր մշակած Քաղաքականության դրույթներից՝ Ընկերության աշխատողներին, շահագրգիռ կողմերին ի գիտություն հասցնելը, ինչպես նաև՝ ԱԱ, ԱՊ, և Հ ու ՃԵԱ կառավարման համակարգերի ապահովման և բարելավման նպատակով աշխատանքների կազմակերպումն ու կառավարումը:

Ընկերության Քաղաքականությունը տարածվում է իր բոլոր ստորաբաժանումների, այդ թվում՝ մասնաճյուղերի, ինչպես նաև հիմնարկների վրա: